ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔ

01.01.2015թ.-28.07.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ 2015թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2015 թվականի հուլիսի 28-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի ղեկավարի 2015թվականի հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները, համայնքի ազգաբնակչությունը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Ալինա Հարությունյանը, մասնավորապես նշելով, որ ժողովի նպատակը համայնքում իրականացված աշխատանքների մասին ներկայացնելն է:

ՕՐԱԿԱՐԳԸ

1. Համայնքի ֆինանսական գործունեության մասին տեղեկատվություն:
2. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն:
3. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում:
4. Քաղաքացիների սոցիալական աջակցության բնագավառում:
5. Համայնքի ղեկավարի գործունեությունն առևտրի և ծառայությունների բնագավառում:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բնակիչներ՝

Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքն ունի 356 տնտեսություն, համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 1983 մարդ: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1635 հա:
Ձեզ հետ մենք կարողացել ենք որոշակի առաջընթաց ապահովել համայնքային նշանակության խնդիրների լուծման գործում: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են եղել սոցիալական, կրթամշակութային ոլորտներին առնչվող խնդիրները: Նախորդ տարիների գործունեության արդյունքները համոզում են, որ նախատեսված ծրագրերը առաջիկա տարիներին ևս շարունակվելու են հաջողությամբ իրականացվել: Վստահ եմ համայնքը կդառնա ավելի բարեկարգ ու հարմարավետ, իսկ մեր բնակիչների խնդիրներն ու հոգսերը հնարավորինս թեթևացած:
Հաշվի առնելով համայնքի բնակչությանը հուզող խնդիրների բազմազանությունը, գյուղապետարանը դրանց լուծման արդյունավետությունը բարձրացնելու և բնակիչների անմիջական կարծիքը հաշվի առնելու նպատակով որդեգրել է լայն համագործակցության գործելաոճ: Արդյունքում համայնքային ենթակայության հիմնարկ ձեռնարկություններն ակտիվ ներգրավվել են գյուղապետարանի իրականացրած ծրագրերում: Տարբեր խնդիրների մասով հաշվետու ժամանակահատվածում ստացվել են քաղաքացիների 39 դիմումներ, 197 գրություններ, որոնց վերաբերյալ համայնքի ղեկավարը կայացրել է 51 որոշումներ, տրվել են 6 կարգադրություններ:
Մշակված նպատակային ծրագրերի համակարգված գործունեության և գյուղապետի հետևողական աշխատանքի արդյունքում նկատվել է դրական տեղաշարժ, որը առկա է համայնքային նշանակության խնդիրների գրեթե բոլոր ոլորտներում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015թվականի օգոստոսի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կազմել են.

Հ/հ	Եկամուտների անվանումները	Պլանավորված Հազ. դրամ	Փաստացի Հազ. դրամ	Կատարման %
1.	Հողի հարկ	2300.0	1334.2	58
2.	Գույքահարկ	4600.0	2812.0	61
3.	Տեղական տուրքեր	524.0	265.0	51
4.	Դոտացիա, այլ դոտացիաներ	29913.3	17402.0	58
5.	Հողի վարձավճար	1500.0	981.9	65
6.	Այլ վարձավճարներ/ աղբահանություն	1720.5	801.2	47
7.	Ինքնակամ կառուցված շենք շինություն, օրինակ. համար վճար	1680.42	1680.42	100
8.	Այլ եկամուտներ	200.0	10.0	5
9.	Հողի օտարում	8500.0	7094.0	83
	ԸՆԴԱՄԵՆԸ	50938.220	32380.72	64

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 765.0 հազար դրամի օգնություն:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

✓ Համայնքի ենթակայությամբ գործում է մեկ մանկապարտեզ (60 երեխա՝ 2 խմբով):

Մանկապարտեզների կառավարման նոր մոդելի ներդրումը և ոլորտին առնչվող խնդիրների համակարգված լուծումները տվեցին ցանկալի արդյունքներ ինչի լավագույն գնահատականը երեխաների զոհունակությունն ու ծնողների հոգսի որոշակի թեթևացումն է:

✓ Ավարտվել է մսուր-մանկապարտեզի շենքի գազաֆիկացման աշխատանքները:

Նորացվել է կոշտ և փափուկ գույքը: Ձեռք է բերվել 771,0 հազար դրամի սարքավորումներ և սպասքի հավաքածու: Դպրոց հաճախող երեխաներին տրամադրվել են գրենական պիտույքներ, դիտակտիկ նյութեր:

✓ Բարելավվել են սանիտարահիգենիկ պայմանները, երեխաների և անձնակազմի բուժ սպասարկումը:

✓ Առաջնային խնդիր է դրվել երեխաների սննդի ճիշտ կազմակերպումը պետական նորմատիվային չափորոշիչներով:

✓ Կատարվել է մսուր մանկապարտեզի խմելու ջրատարների կապիտալ նորոգում՝ 543,0 հազար դրամ:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

- ✓ Նոր Երզնկայի մշակույթի տունը կապիտալ վերանորոգված է:
- ✓ Ձեռք է բերվել գույք, վարագույրներ, 147,0 հազար դրամ գումարով: Գրադարանը ունի 7052 կտոր գրականություն, տարեկան շուրջ 557 ընթերցող: Մշտապես կազմակերպվում են ասմունքի ցերեկույթներ, միջոցառումներ նվիրված գրողների տարեդարձներին:
- ✓ Կազմակերպվել են մարզական և մշակութային տարբեր միջոցառումներ ի հայտ բերելու և խրախուսելու համայնքի շնորհաշատ երեխաներին:
- ✓ Համայնքի մշակույթի տանը տեղի ունեցավ կիոկուշին կարատեի օլիմպիական շարժմանը նվիրված մրցաշար, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից ժամանած 200 մարզիկներ: Նոր Երզնկայի մարզիկներից երկուսը՝ ստացան ոսկի, հինգը՝ արծաթ և մեկը բրոնզե մեդալ: Մշակույթի տանը տեղի ունեցավ պարի խմբի հաշվետու համերգը, որը մեծ բավականություն պարգևեց համայնքի բնակչությանը Այս ոլորտում ևս կան հիմնախնդիրներ, որոնք պահանջում են պատշաճ ուշադրություն:
- ✓ Պետական տոները, ինչպես նաև համայնքային միջոցառումները կազմակերպվել և անցկացվել են բարձր մակարդակով:
- ✓ Մշկույթի տան պարի խմբի համար ձեռք է բերվել հագուստ՝ 247,0 հազար դրամի:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Համայնքի բնակչության սոցիալական ապահովության խնդիրների լուծման համար բյուջեում նախատեսվել է 500.0 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 17 դիմում, որոնց տրամադրվել է դրամական օգնության:

- ✓ Իրականացվել է համայնքի նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների և աշխատողների բուժպրոֆիլակտիկ հետազոտություններ:
- ✓ Ամանորի և Սուրբ ծնունդի տոնակատարությունների շրջանակներում նախադպրոցական և դպրոցական հաստատությունների երեխաները ստացել են նվերներ:
- ✓ ՀՀ Ազգային տոներին և հիշատակի օրերին կազմակերպված բոլոր տոներին ուշադրության կենտրոնում են Արցախյան պատերազմի հաշմանդամների և զոհվածների ընտանիքները, տարեց միայնակ թոշակառուները, ծնողազուրկ, անապահով ընտանիքների երեխաները, պարբերաբար նրանց ցուցաբերվել է դրամական օգնություններ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում քիչ չեն նաև այս ոլորտին առնչվող խնդիրները, և աշխատանքներն իրականացվում են ըստ առաջնահերթության ու հրատապության: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

- ✓ Կնքվել է պայմանագիր Աշտարակի «Վիկտորիա» ՍՊԸ-ի հետ, որը կատարում է կենցաղային աղբի տեղափոխում շաբաթական 1-օրյա գրաֆիկով:
- ✓ Համայնքի տարածքում ջրամատակարարումն իրականացվում է շուրջօրյա գրաֆիկով:

- ✓ Մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվում կոյուղու մաքրման աշխատանքները: Ժամանակին վերացվել են խցանումները և նորոգվել են 4 դիտահորեր :
  Շուրջ 200.0 հազ. դրամ ծախսվել է կոյուղու մաքրման և վերանորոգման աշխատանքների համար:
- ✓ Համայնքն ունի փողոցային լուսավորություն:
- ✓ «Աշտարակ» ՋՕԸ-ի հետ համատեղ կատարվել է համայնքի ոռոգման ներքին ցանցի մասնակի նորոգման և մաքրման աշխատանքներ:
- ✓ Մասնակի վերանորոգվել է գյուղապետարանի շենքի մի հատվածը:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2015 թվականի հունվարի 1-ից մինչ օրս համայնքում գործում է 6 առևտրի և մեկ հասարակական սննդի օբյեկտներ:

- ✓ Օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հսկողություն է իրականացվել առևտրի և հանրային սննդի 6 և 1 հասարակական սննդի օբյեկտներում:
- ✓ Առևտրի 6 օբյեկտներին տրվել է ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- ✓ Համայնքում իրագործվում է տեղի ունեցավ «Գյուղատնտեսական Տեխնիկական Աջակցության» ծրագրով նախատեսված սեմինար, որին մասնակցում էին համայնքի 25 բնակիչներ: Սեմինարի թեման էր՝ այգեգործության և մշակաբույսերի խնամքը: Սեմինարի մասնակիցները դասընթացի ընթացքում մեթոդական օգնություններից բացի ստացան գյուղատնտեսական գործիքներ:
- ✓ Գյուղացիական տնտեսությունների համար ձեռք է բերվել 20 տոննա ազոտական պարարտանյութ և 2 տոննա դիզ. վառելանյութ:
- ✓ Անասնաբուժական ծառայության աշխատանքները մշտապես ուշադրության կենտրոնում է:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կայացել է Նոր Երզնկա համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում օտարվել է 1,74 հա գյուղ. նշանակության հողեր:

Նիստի օրակարգային հարցերն ավարտվեցին և նիստը հայտարարվեց փակված: